Արձանագրություն 2

«ԳՀԱՊՁԲ-ՄՍ-ՁԻԱՀ-18/1» ծածկագրով գնանշման հարցման ձևով մանկական սննդի ձեռքբերման գնման ընթացակարգի հանձնաժողովի հայտերի բացման նիստի

Անցկացման վայրը՝ ք.Երևան, Աճառյան 2, «ՁԻԱՀ-ի կանխարգելման հանրապետական կենտրոն» ՊՈԱԿ, 2-րդ հարկ, 207 սենյակ
Անցկացման օրը՝ 17 հունվարի 2018թ.
Անցկացման ժամը՝ 11:00
Մասնակցում էին՝
Հանձնաժողովի նախագահ՝ Արշակ Ասմարյան

Հանձնաժողովի անդամներ՝ Տաթևիկ Շիրինյան
Վարդան Արզաքանյան
Յուլյա Մանուկյան
Լիանա Շախրամանյան
Հանձնաժողովի քարտուղար՝ Գևորգ Խանոյան
Նիստին ներկա էր «Ալֆա-ֆարմ» ՓԲԸ-ի ներկայացուցիչ Վ.Ղարիբյանը:

I. Գնանշման հարցման ձևով գնում կատարելու ընթացակարգի հայտերի բացման մասին

(նախագահ՝ Արշակ Ասմարյան)

1.1 Ընդունել ի գիտություն, որ.
Սահմանված ժամկետում և սահմանված կարգի պահանջներին համապատասխան հայտ են ներկայացրել հետևյալ կազմակերպությունները.

N	Մասնակիցների անվանումները (անունները)	Հասցեները	էլ.հասցեն
1.	«Ալֆա-ֆարմ» ՓԲԸ	ք.Երևան, Շիրակի 1/68, հեռ. 060-700-500	tender@alfapharm.am

1.2 Տվյալներ՝ ծրարների կազմման և ներկայացման՝ հրավերի պահանջներին համապատասխանության մասին.

Հանձնաժողովը որոշեց.

N	Մասնակիցների անվանումները (անունները)	համապատասխանում է/ չի համապատասխանում
1.	«Ալֆա-ֆարմ» ՓԲԸ	համապատասխանում է

Ընդունվել է որոշում՝ կողմ 5, դեմ 0:

1.3 Տվյալներ՝ բացված յուրաքանչյուր ծրարում հրավերով պահանջվող փաստաթղթերի առկայության և յուրաքանչյուր մասնակցի ներկայացրած փաստաթղթերի՝ հրավերով սահմանված պայմաններին համապատասխան կազմված լինելու մասին.

Հանձնաժողովը որոշեց.

N	Մասնակիցների անվանումները (անունները)	փաստաթղթերը առկա են / առկա չեն
1.	«Ալֆա-ֆարմ» ՓԲԸ	առկա են

N	Մասնակիցների անվանումները (անունները)	հրավերով սահմանված վավերապայմաններին համապատասխանում են/ չեն համապատասխանում
1.	«Ալֆա-ֆարմ» ՓԲԸ	համապատասխանում են

Բացված յուրաքանչյուր ծրարում առկա են պահանջվող (նախատեսված) փաստաթղթերը և դրանք կազմված են հրավերով սահմանված վավերապայմաններին համապատասխան:

Ընդունվել է որոշում՝ կողմ 5, դեմ 0:

1.4 Հայտ ներկայացրած մասնակցի գնային առաջարկը.

N	Մասնակիցների անվանումները (անունները)	Նախահաշ-վային գին	Արժեք (ինքնարժեքի և կանխատեսվող շահույթի հանրագումարը)	ԱԱՀ	Առաջարկված ընդհանուր գինը	Առաջարկված ընդհանուր գինը, առանց ԱԱՀ-ի
1	2	3	4	5	6	7
Չափաբաժին 1: Գնման առարկա է հանդիսանում՝ մանկական սնունդ 1						
1	**«Ալֆա-ֆարմ» ՓԲԸ**	**8419400**	**5244176,67**	**1048835,33**	**6293012**	**5244176,67**
Չափաբաժին 2: Գնման առարկա է հանդիսանում՝ մանկական սնունդ 2						

1	**«Ալֆա-ֆարմ» ՓԲԸ**	**2580000**	**1607000**	**321400**	**1928400**	**1607000**

1.5 Հանձնաժողովը որոշեց.

«Ալֆա-ֆարմ» ՓԲԸ-ի կողմից ներկայացված հայտը համապատասխանում է հրավերով սահմանված պայմաններին:

Ընդունվել է որոշում՝ կողմ 5, դեմ 0:

1.6 Ընդունել ի գիտություն, որ.

Հայտերի բացումից հետո հանձնաժողովի անդամները հայտարարել են, որ հիշյալ ընթացակարգի առնչությամբ չունեն շահերի բախում:

Հայտերի հետկանչում կամ փոփոխություններ չեն եղել:

Հայտերի վերաբերյալ հարցումներ և պատասխաններ չեն եղել:

Ընդունվել է որոշում՝ կողմ 5, դեմ 0:

1.7 Բանակցությունների անցկացում

N 1 և N 2 չափաբաժինների մասով հանձնաժողովի նիստում առաջարկված գների նվազեցման նպատակով մասնակցի հետ վարվել են բանակցություններ, ինչի արդյունքում «Ալֆա-ֆարմ» ՓԲԸ-ի ներկայացուցիչը չի կատարել գնի իջեցում:

II. Առաջին և հաջորդաբար տեղերը զբաղեցրած մասնակիցների որոշման և հայտարարման մասին

(նախագահ՝ Արշակ Ասմարյան)

2.1 Հրավերի պահանջների նկատմամբ բավարար գնահատված հայտեր ներկայացրած մասնակիցների թվից՝ նվազագույն գնային առաջարկ ներկայացրած մասնակցին նախապատվություն տալու սկզբունքով, հանձնաժողովը որոշեց.

1-ին տեղ զբաղեցնող ճանաչել՝

N 1 և N 2 չափաբաժինների համար «Ալֆա-ֆարմ» ՓԲԸ-ին:

Ընդունվել է որոշում՝ կողմ 5, դեմ 0:

2.2 Ընդունել ի գիտություն, որ

Հանձնաժողովի քարտուղարը էլեկտրոնային եղանակով՝

- ✓ ՀՀ կառավարությանն առընթեր պետական եկամուտների կոմիտե հարցում է ներկայացնելու առաջին տեղն զբաղեցրած մասնակցի՝ հայտը ներկայացնելու օրվա դրությամբ հարկային մարմնի կողմից վերահսկվող եկամուտների գծով ժամկետանց պարտավորությունների, ինչպես նաև հրավերով «ֆինանսական միջոցներ» որակավորման չափանիշի գնահատման համար սահմանված պայմանների առկայության վերաբերյալ՝ ներկայացնելով մասնակցի անվանումը և հարկ վճարողի հաշվառման համարը:
- ✓ Ծանուցելու է առաջին տեղը զբաղեցրած մասնակցին՝ ներկայացնել հրավերի հավելված 6.1-ով նախատեսված նկարագիրը:

III. Հայտերի գնահատման արդյունքների հաստատման նիստի անցկացման օրը, ժամը և վայրը որոշելու մասին

(նախագահ՝ Արշակ Ասմարյան)

3.1. Հանձնաժողովը որոշեց.

Հայտերի գնահատման արդյունքների հաստատման նիստն անցկացնել գնահատող հանձնաժողովի անդամների կողմից առաջին տեղը զբաղեցրած մասնակցի փաստաթղթերի գնահատման թերթիկները հանձնաժողովի քարտուղարին տրամադրելուն հաջորդող աշխատանքային օրը ժամը 15:00-ին՝ «ՁԻԱՀ-ի կանխարգելման հանրապետական կենտրոն» ՊՈԱԿ-ի շենքում, հասցեն՝ Աճառյան 2, N 207 սենյակում:

Ընդունվել է որոշում՝ կողմ 5, դեմ 0:

Նիստին ներկա հանձնաժողովի անդամների անունները, ազգանունները և ստորագրությունները

Հանձնաժողովի նախագահ՝	Ա.Ասմարյան	_____ (ստորագրություն)
Հանձնաժողովի անդամներ՝	Տ.Շիրինյան	_____ (ստորագրություն)
	Վ.Արզաքանյան	_____ (ստորագրություն)
	Յու.Մանուկյան	_____ (ստորագրություն)
	Լ.Շախրամանյան	_____ (ստորագրություն)
Հանձնաժողովի քարտուղար՝	Գ.Խանոյան	_____ (ստորագրություն)